


Հայկական ԱՄՆ



Ժողովրդական Տնտեսութեան Զարգացման Գրողները

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԵՐԿՐԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՏԱԿԱ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ ԵՎ Է. ՂՈՒՅԱՆ

Մինչև նոյն ժամանակները ունեւորուցիւմ Հայաստանի հանրային հոմաքի պաշարների մասին փոքր ի շատ ստույգ գիտելիքներ չեն եղել, որպէսզի կարելի լինէր զարգացնել հանրադրուումահանող և մետաղագործական արդյունաբերութիւնը: Հայկական ՍՍՌ-ն ունի մոլիբդենի, պղնձի, ոսկու, կապարի, ցինկի, երկաթի, հազվագյուտ և ցրված էլեմենտների, քարաղի, բազմատեսակ արծեքավոր շինանյութերի ու հանքային ջրերի ըզգալի պաշարներ:

Մոլիբդենի հատախուզված պաշարների քանակութիւմը Հայաստանը Մովետական Միութեան մեջ առաջատար տեղերից մեկն է գրավում:

Ռեսպուբլիկայում վճռական նշանակութիւն է ձեռք բերում Զանգեզուրի հանքային շրջանը, որտեղ հայտնագործված ու հետախուզված են մոլիբդեն, պղնձ, հազվագյուտ և ցրված էլեմենտներ (ոսկիում, սելեն, թելուր և այլն) պարունակող մի շարք շտովերկային և մասամբ ջիղային հանքավայրեր:

Վերջին տարիների աշխատանքների շնորհիվ Հայաստանի երկրաբանները հայտնաբերել են մոլիբդենաբեր նոր շրջաններ, որոնք զգալի նշանակութիւն ունեն:

Նշեցնելով ռեսպուբլիկայի տերիտորիայի երկրաբանական կառուցվածքից և մոլիբդենի հանքանյութի տեղաբաշխման երևան հանված օ-

րինաչափութիւններից, մոլիբդենի շտովերկային տիպի նոր հանքավայրեր հայտնաբերելու հրնարավորութիւնները շատ մեծ են:

Մոլիբդենի գծով կատարվելիք հետագա երկրախուզական աշխատանքների հիմնական խնդիրներն են.

ա) որոնումնային-հետախուզական աշխատանքներ կատարել շահագործվող հանքավայրերի թեկոտ՝ արդյունաբերական նոր տեղամասեր հայտնաբերելու և կոնդիցիտն հանքանյութի պաշարներն ավելացնելու նպատակով:

Դաստակերտի կոմբինատի հարստացնող ֆաբրիկայի ընդարձակվող կարողութիւնն ապահովելու համար անհրաժեշտ է արագացնել խոր հորիզոնների տուումնասիրումը և ուժեղացնել որոնումնային աշխատանքները հանքավայրի շրջանում:

բ) որոնումնային աշխատանքներ կատարել Գեղ գետի ավազանում, նպատակ ունենալով երևան հանել դուրահարստացող կոմպլեքսային պղնձամոլիբդենային հանքանյութեր, որոնք 0,07 % -ից ավելի մոլիբդեն են պարունակում:

գ) որոնումնա-հետախուզական մանրազնիւ աշխատանք կազմակերպել Վարդենիսի լեռնաշղթայի երկու կողմի լանջերին և Հանքավանի հանքավայրի թեկոտ՝ մոլիբդենի հարուտ հանքանյութեր հայտնաբերելու նպատակով:

Մեծ ուշադրութիւն պետք է դարձվի նոր հայտնաբերված հանքավայրերի ուսումնասիրման վրա, քանի որ այստեղ եղած մոլիբդենի ու ունիումի զգալի պաշարները, Զոդի և Ղազմայի հանքավայրերի, ինչպես նաև «Ջերմուկ» կուրորտի հանքային ջրերի հետ միասին լուրջ նեցուկ կարող են հանդիսանալ ռեսպուբլիկայի կենտրոնական շրջաններում արդյունաբերութիւնը զարգացնելու գործում:

Պղնձ: Մինչև 1920 թ. հայտնի էին և շահագործման էին ենթարկվում Ղափանի (Զանգեզուրի) և Ալավերդու հանքավայրերը, որոնց պաշարները, սակայն, հաշված չեն եղել: Ներկայումս, երկրաբանական կազմակերպութիւնների կատարած նպատակասլաց աշխատանքների շնորհիվ, հայտնաբերված են պղնձի հանքավայրեր ու հանքահայտածումներ ռեսպուբլիկայի գրեթե բոլոր շրջաններում: Զանազան տիպերի մեջ (պղնձա-կոլչեդանային, պղնձա-մոլիբդենային, պոլիմետաղական, պղնձա-համատիտային և այլն) հիմնական արդյունաբերական նշանակութիւն ունեն կոմպլեքսային պղնձա-մոլիբդենային և պղնձա-կոլչեդանային հանքանութիւնները, որոնց գծով հաշվառման են ենթարկված ռեսպուբլիկայում եղած պղնձի հիմնական հետախուզված պաշարները:

Առ 1-ը հունվարի 1958 թ. պղնձա-կոլչեդանային հանքանութիւններում եղած պղնձի պաշարները կազմում են ռեսպուբլիկայի պղնձի ընդհանուր հաշվառված պաշարների 10 %-ը:

Վերջին տարիներին ռեսպուբլիկայի երկրաբանները վերագնահատման են ենթարկել Ալավերդու և Ղափանի հանքադաշտերի հանքաբերութիւնը և նրանց սահմաններում ծավալվել են որոնումնա-հետախուզական լայն աշխատանքներ:

Ղափանի հանքադաշտի տերիտորիայում հայտնաբերվել են նոր հեռանկարային տեղամասեր և հարուստ հանքամարմիններ, որոնց մասնաբաժին հետախուզութիւնը, անշուշտ, կավելացնի Ղափանի հանքավայրի արժեքավոր հանքանութիւնի բալանսային պաշարները 5—6 անգամ:

Դրական արդյունքներ են տվել այն որոնումնա-հետախուզական աշխատանքները, որոնք կատարվել են 1957—1958 թվականներին Ալավերդու լքված հանքավայրի շրջանում: Այստեղ հայտնաբերվել են նոր հանքաբեր հորիզոններ՝ ար-

դյունաբերական հանքամարմինների առկայութիւնը: Շամլուղի հանքավայրի թեւրում հայտնաբերվել է մի նոր հեռանկարային տեղամաս թխմախալայում:

Պղնձա-կոլչեդանային արժեքավոր հանքանութիւնների պաշարները զգալի չափով ավելացնելու նպատակով անհրաժեշտ է ամենամոտ տարիներում որոնումնա-հետախուզական լայն աշխատանքներ անցկացնել, կիրառելով հետազոտման գեոքիմիական, գեոֆիզիկական և այլ նորագույն մեթոդներ, առաջին հերթին՝ Ղափանի և Ալավերդու հանքային շրջանների սահմաններում:

Ռեսպուբլիկայի տերիտորիայում եղած մյուս հայտնի հանքանութիւնների հայտածումներից ուշադրութիւն արժանի են սպիլիտա-կերատոֆիրային կազմավորումների տարածման շրջանները Հայաստանի հյուսիսային մասում: Այդ տեսակետից որոշ հետաքրքրութիւն են ներկայացնում նաև Աղվի-Փալանթոքանի հանքադաշտը, Չիբուխուկի և Տանձուտ-Մայմեխի հիդրոթերմալ կերպով փոփոխված պարների գոտին, Մզրտի հանքային հայտածումը և այլն, որտեղ տարածված են ծծրմբա և պղնձա-կոլչեդանային հանքանութիւններ:

Երկրաբանական-կառուցվածքային և լիթոլոգիական բարեհաջող գործոնների առկայութիւնը հիմք է տալիս նախատեսելու այստեղ խոշոր մասշտաբի (1:25 000, 1:10 000 և այլն) երկրաբանական-նկարահանման և կոմպլեքսային որոնումնա-հետախուզական աշխատանքների կատարումը, նպատակ տննելով երևան հանել եղած կոլչր հանքամարմինները և նշված հանքային դաշտերի ընդհանուր արդյունաբերական գնահատականը:

Առաջիկա տարիների երկրախուզական աշխատանքների հիմնական խնդիրներից մեկն է՝ ապահովել Ալավերդու պղնձահալ գործարանը պղնձի հանքանութիւնների հարուստ պաշարներով՝ գործարանի մոտերքում գտնվող հանքավայրերի հաշվին:

Ոսկի: Հայաստանում ոսկին հանդիպում է հիմնականում իբրև ուղեկից կոմպոնենտ պղնձա և ծծրմբա-կոլչեդանային ու պոլիմետաղական հանքանութիւններում կվարցի ջիդերում և կվարցավորված գոտիներում, ինչպես նաև ցրոններում:

Վերջին տարիների հետազոտութիւններից պարզվել է, որ ռեսպուբլիկայի հիմնական ար-

դրոնաբերական ոսկու հանքավայրերը կապված են կվարցի ջիղերի և կվարցավորված գոտիների հետ, որոնք տեղաբաշխված են լեռնային ապարների զանազան կազմավորումների մեջ:

Առաջիկա տարիներում աշխատանքների հիմնական շրջանը նախատեսվում է հիմնային և ուլտրահիմնային ապարների զարգացման փոքր-կովկասյան գոտին, որտեղ անհրաժեշտ է կազմակերպել մեծածավալ կոմպլեքսային երկրաբանական նկարահանման և հետախուզական աշխատանքներ՝ արդյունաբերական պաշարները հաշվելու, հայտնի հանքային հայտածումներին արդյունաբերական գնահատական տալու, ինչպես նաև մի շարք այլ գործնական և գիտական խնդիրներ լուծելու համար:

Ոսկու հեռանկարային հանքավայրեր են հանդիսանում նաև Տանձուտ-Մայմեխի, Մարտունու և Կաճաճկուտ-Ոսկեպարի կվարցավորված ապարների գոտիները, որոնց սահմաններում նկատվում են կվարցային ջիղեր և երկրորդական կվարցիտների կուտակներ տսկու հանքավորումով: Որոնոմնային աշխատանքների կազմակերպման համար հետաքրքիր օբյեկտներ են հանդիսանում նաև գրանիտոիդային զանգվածների ծայրամասային գոտիները (Փամբակ, Այգեձորի շրջան և այլն), որտեղ հանդիպում են կվարցի ջիղեր ոսկու հանքավորման հայտածումով:

Ցրոնային ոսկու գծով որոնումնա-հետախուզական աշխատանքներ կազմակերպելու համար առավել հեռանկարային օբյեկտներ են հանդիսանում:

1) ցրոնները Աղստև գետի հովտում կոմպլեքսային են և, բացի ոսկուց, գալի բանակուլթյամբ պարունակում են նաև վոլֆրամ, ցերիում, լանտան և սկանդիում միներալներ:

2) ցրոնները, որոնք տարածվում են պլազմո-րապես Մարմարիկ գետի հովտում:

3) ցրոնները, որոնք զարգացած են Սևանա լճի ավազանի արևելյան հարթավայրի սահմաններում:

4) Արարատյան դաշտավայրի արևմտյան մասի ցրոնները:

Կապար և ցինկ: Ներկայումս կապար-ցին-

կային հանքաքարերի հայտածումները հայտնվել են Հայաստանի շատ շրջաններում:

Կենտրոնական Հայաստանում առավել հեռանկարային օբյեկտը Գաղմայի հանքադաշտն է, որտեղ հայտնաբերված է ավելի քան 90 ջիղ կապար-ցինկային հանքանյութով, դրանցից թեթև շատ մանրամասնորեն ուսումնասիրված է 10 ջիղ: Վերջին տարիների աշխատանքները ցույց են տվել, որ հաճախ առանձին ջիղերի 0,5-ից մինչև 1 մ կարողությամբ մերձալբանդային մասերն ավելի ինտենսիվ կերպով են տարածված, քան բուն ջիղերը: Պարզվել է նաև, որ խորության հետ ավելանում է ջիղերի կարողությունը և մետաղների պարունակությունը: Ըստ նախնական տրվյալների Գաղմայի հանքավայրում կարող են երևան հանվել և հաշվառվել կապարի ու ցինկի պաշարներ, որոնք գերազանցում են Ախթալայի հանքավայրի ներկայումս շահագործվող պաշարներից:

Մոտ ժամանակներում անհրաժեշտ է արագացնել այդ հանքավայրի խոր հորիզոնների և թևերի ուսումնասիրությունը:

Հյուսիսային Հայաստանում կապարի առավել հեռանկարային շրջանը Ախթալայի հանքավայրի հանքային դաշտն է: Ախթալայի հանքավայրի հանքաքարերում, բացի կապարից, ցինկից, պղնձից և բարիտից, արդյունաբերական քանակություններով պարունակվում են ուղեկից կոմպոնենտներ՝ ոսկի, արծաթ, կալմիում և այլն: Հանքաքար ապարների ընդհանուր մակերեսը կազմում է ավելի քան 8 կմ², որն ընդհանուր առմամբ թույլ է ուսումնասիրված:

Մանրամասն ուսումնասիրման արժանի է նաև Ախթալայի (Հայաստանում) և Բոլնիսի (Վրաստանում) հանքային դաշտերի միջև ընկած տերիտորիան:

Շամշադինի շրջանի կապար-ցինկային հանքավայրերը ավելի մանր են և երևան են գալիս բարդ ձևի հանքամարմինների ձևով: Այդ շրջանի հանքային հայտածումների մեծ մասը կենտրոնացված է խիստ փոփոխված ժայթքումնային ապարների հզոր գոտում: Իրանց հեռանկարը որոշելու համար անհրաժեշտ է կազմել փոփոխված ապարների գոտու մանրամասն երկրաբա-

նական կառուցվածքային քարտեզը (1:10 000 մասշտաբով) և հետախուզա-կառուցվածքային հորատում կազմակերպել Զերդաշիձորի հանքային հայտածումների շրջանում:

Ռեսպուբլիկայի կապարա-ցինկային հանքավայրերի մեջ առանձին տեղ է գրավում Պրիվալնոյի հանքավայրը, որը կապված է հրաբխային-նստվածքային ապարների կոմպլեքսի հետ և երևան է գալիս 1 մ կարողությամբ թեք իջնող շերտավոր մարմինների ձևով:

Հանքանյութի տարածումը չափազանց անհամաչափ է ու աղքատ, պաշարները շատ մեծ են, բայց ցրված բաղմամբով, միմյանցից անշատ տեղամասերում: Հանքավայրի արդյունաբերական չորացման և մանրամասն հետախուզման նպատակահարմարությունը պետք է որոշվի ռեսպուբլիկական «Արմզիպրոցվետմետ» ինստիտուտի կատարած տեխնիկա-տնտեսական հաշվարկումների միջոցով:

Հազվագյուտ և ցրված էլեմենտներ: Վերջին տարիների աշխատանքներով պարզվել է, որ ռեսպուբլիկայում եղած պղնձա-մոլիբդենային, ոսկե-հանքային, պղնձա և ծծմբա-կոլչեդանային, պոլիմետաղական և այլ հանքաքարերն իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ արժեքավոր հազվագյուտ ու ցրված էլեմենտներ:

Հայաստանի հանքաքարերում հայտնաբերված հազվագյուտ և ցրված էլեմենտների ամբողջ կոմպլեքսի մեջ առավել կարևոր տեղ են գրավում ռենիումը, սելենը, թելուրը, կադմիումը, բիսմութը և այլն:

Ռենիումի գլխավոր աղբյուր հանդիսանում են պղնձա-մոլիբդենային հանքաքարերը, որոնց մոլիբդենային կոնցենտրատը միջին հաշվով պարունակում է 0,025-ից մինչև 0,1% ռենիում:

Սելենը և թելուրը արդյունաբերական կոնցենտրացիաներում հանդիպում են հանքաքարերի վերևում թվարկած բոլոր տիպերում: Կադմիումի հիմնական կոլչեդանները պոլիմետաղական հանքաքարերն են:

Ռեսպուբլիկայի հանքաքարերում ու ապարներում, բացի նշված էլեմենտներից, հայտնաբերված են արդյունաբերական պարունակությամբ նաև ցերիում, լանտան, լիթիում, ստրոնցիում և այլ էլեմենտներ:

Եղեգնաձորի շրջանի երրորդական կարբոնատային նստվածքներում ընթացիկ տարում կատարված հետախուզական աշխատանքների միջոցով հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցելեստին (ստրոնցիում միներալի) պարունակող առանձին հորիզոններ:

Ամենամոտ տարիների խնդիրներն են՝ պարզել հազվագյուտ և ցրված էլեմենտների պաշարները և տեխնոլոգիական հետազոտություններ կատարել, նպատակ ունենալով ուսցիտնալ սխեմաներ մշակել այդ էլեմենտները հարստացնելու և դրանք դանազան հանքաքարերից ու ապարներից ստանալու համար: Այդ գործում մեծ օգնություն պետք է ցուցաբերեն գիտա-հետազոտական կազմակերպությունները:

Սև մետաղներ: Ռեսպուբլիկայի տերիտորիայում հայտնի են դարձել երկաթաքարերի մեծ քանակությամբ հայտածումներ: Նախնական հետազոտությունները ցույց են տվել, որ դրանց մեջ առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ախտայի, Սվարանցի, Հաղարծնի և Շվանիձորի հանքավայրերը: Չափազանց ձեռնտու լինա-տեխնիկական ու տրանսպորտային պայմաններում է գտնվում Ախտայի հանքավայրը, որն աչքի է ընկնում հանքաքարերի բարձր որակով: Այստեղի պաշարները մեծ չեն և հետախուզական աշխատանքների նախատեսվող կոմպլեքսն ավարտելուց հետո, հավանորեն, կարող են հասնել մինչև 10 մլն տ մետաղի: Ախտայի հանքավայրի ու երկաթի տեղական ջարդուկի բազայի վրա ստեղծված երկաթի ձուլման ձեռնարկությունը կապահովի ռեսպուբլիկայի սև մետաղի պահանջի հիմնական մասը 20—25 տարով և հնարավորություն կտա մատակարարելու թեկուզ տրանսֆորմատորներ, դինամոմեքենաներ, կտրող գործիքներ և այլն արտադրող գործարաններին:

Գորիսի շրջանում գտնվող Սվարանցի հանքավայրն ունի անհամեմատ մեծ պաշարներ և ավելի խոշոր չափերի հասնող հանքամարմիններ, բայց այստեղի հանքաքարելն աղքատ են. հանքաքարերը բաղկացած են մագնիտիտից և օլիվինից՝ վանադիումի, տիտանի, նիկելի ու կոբալտի հետ խառնված և աչքի են ընկնում մագնիտի բարձր պարունակությամբ (20—25%), ու սիրի-

կահողի ցածր պարունակութեամբ (15—20 %), նման հանքաքարերը սովորաբար ինքնաֆլյուսավորվող են և երկաթի ցածր պարունակութիւնը այնքան էլ խիստ չի անդրադառնում արտադրանքի արժեքի վրա:

Յոթնամյա պլանում նախատեսվում է հանքավայրի մանրամասն հետախուզումը: Հումքի տեխնոլոգիական հետազոտութիւններից դրական արդյունքներ ստացվելու դեպքում Սվարանցի հանքավայրը կարող է բազա հանդիսանալ բավական խոշոր մետալուրգիական կոմբինատի համար:

Դիլիջան քաղաքից ոչ հեռու գտնվող Հաղարծնի տիտանա-մագնետիտային հանքավայրը պատկանում է շերտանստվածքային տիպին: Հանքաքարերը դժվարահալ են, աչքի են ընկնում տիտանի և վանադիումի համեմատաբար բարձր պարունակութեամբ: Նման հանքաքարերից երկաթը սովորաբար ստացվում է թանկ արժեքող էլեկտրահալման միջոցով:

Մեղրու շրջանի Եվանիձոր գյուղի շրջանում (մեծ տարածութեան վրա) երկաթաքարերի հայտածումներն, անշուշտ, նախնական հետախուզման կարիք ունեն: Հանքավայրի տնտեսական պայմանները բարենպաստ են: Հանքավայրի հետախուզումը մտցված է առաջիկա տարիների պլանի մեջ:

Յոթնամյա պլանով մի շարք շրջաններում նախատեսվում է կատարել վերերկրյա և օդային մագնիսամետրական նկարահանումներ, որոնք մեծ էֆեկտ են տալիս երկաթաքարերի որոնումների ժամանակ: Այդ նկարահանումները հնարավորութիւն կտան ճշտելու ռեսպոնդիկայի մի շարք այլ շրջաններում հայտնաբերված հանքային հայտածումների մասշտաբները և ավելի նպատակամետ ուղղութիւն տալու հետագա որոնումնային-հետախուզական աշխատանքներին:

Ռեսպոնդիկայի գիտա-հետազոտական կազմակերպութիւնների կարևոր խնդիրներից մեկն է՝ ուսումնասիրել և տեխնոլոգիական ռացիոնալ մեթոդներ մշակել երկաթ ստանալու մագնետիտ-օլիվինային (Սվարանց) և տիտանա-մագնետիտային (Հաղարծին) հանքաքարերից, որոնք արդյունաբերական հետաքրքրութիւն ներկայացնող մեծ պաշարներ ունեն:

Հրահեստ հումք: Հայկական ՍՍՌ տերիտորիալում կան նաև մագնեղիումային բարձր հրահեստ ապարների զգալի պաշարներ, որոնք արժեքավոր հումք են հանդիսանում մետալուրգիական արդյունաբերութեան համար: Այդ հումքի անհրաժեշտ պաշարներն առաջիկա տարիներում երևան հանելու համար հեռանկարային են համարվում Սևնա լճի հյուսիս-արևելյան ափերի տւտրահիմնային ապարների տարածման շրջանները: Հարկավոր է նշել, որ այդ ապարները հաճախ պարունակում են մեծ քանակութեամբ (միջին հաշվով մինչև 1%) նիկել, ավելի հազվադեպ՝ կոբալտ: Մագնեզիումային ապարների պաշարները պարզելու հետ մեկտեղ, հարկավոր է լրջորեն զբաղվել արդյունաբերութեան մեջ դրանց կոմպլեքսային օգտագործման հարցով:

Սովետական Միութեան արդյունաբերութիւնն անդալուզիտային հրահեստ նյութերի կարիք ունի: Վերջիններս զարգացած են կիրովականի շրջանի սահմաններում, մեծ տարածութիւնների վրա (Միսիմադանի հանքավայրը): Մոտ տարիներում այստեղ հարկավոր է հետախուզական և որոնումնային աշխատանքներ կազմակերպել, նպատակ ունենալով տալ հանքավայրի արդյունաբերական դնահատականը և հայտնաբերելու նոր արդյունաբերական-հեռանկարային տեղամասեր:

Եինանյութեր: Հայկական ՍՍՌ-ում արժեքավոր շինարարական նյութերի՝ պերլիտների, զանազան տուֆերի, պեմզայի, խարամի, բազալտի, դրանիտի, մարմարի, կրաքարի ու այլ շինարարական նյութերի աղբյուրները գործնականորեն անսպառ են: Հանքավայրերը գտնվում են լեռնատեխնիկական ու տնտեսական չափազանց նպաստավոր պայմաններում:

Անհրաժեշտ է հետախուզական աշխատանքներ ծավալել՝ ռեսպոնդիկայում շինանյութերի (պերլիտի, տուֆի, պեմզայի, խարամի և այլնի) հզոր բազա ստեղծելու նպատակով: Միաժամանակ հատուկ ուշադրութիւն պետք է դարձիլ բնական բարձր ծակոտիկներ լցանյութերի (պեմզա և խարամ) հետախուզման վրա, նկատի ունենալով, որ Հայաստանը կարող է մատակարարել երկրի տրնտեսական շրջանների մեծ մասին ինչպես հումք, նույնպես և այդ հումքից պատրաստած առարկաներ: Մասնավորապես, Հայաստանը կարող է խա-



րամի կամ ուռեցված պերլիտների բազայի վրա կազմակերպել ֆիննական տիպի հավաքովի տնե-
րի խոշոր, միուժենական մասշտաբի արտադրու-
թյուն:

Բնակարանային շինարարության լաճ, զար-
գացման կապակցությամբ Հայկական ՍՍՌ-ը գա-
ջի ու գիպսի սուր կարիք է զգում: Այդ պատճառով
անհրաժեշտ է նրան քաղաքի շրջակայքում, Ղա-
փանի, Ալավերդու, Կիրովականի, Ադիգբեկովի,
Իջևանի և մյուս շրջաններում արագացնել գիպսի
և գաջի որոնումնահետախուզական աշխատանք-
ները այն հաշվով, որպեսզի ստեղծվող ձեռնար-
կությունները կարողանան ապահովել թե՛ դրանց
և թե՛ հարևան շրջանների գաջի ու գիպսի պա-
հանջը:

Տարեցտարի աճում է նաև ժողովրդական
տնտեսության մարմարի պահանջը: Մարմարի
հանքավայրեր ռեսպուբլիկայում շատ կան, սա-
կայն առայժմ չկան այնպիսի հանքավայրեր,
որոնք տնեհնային բարձրորակ մարմարի հետա-
խուզված մեծ պաշարներ և հնարավորություն
տային հողքի արդյունահանումը մեխանիզա-
ցիայի ենթարկելու մեծ տարածությունների վրա:
Մոտ ժամանակներս հետախուզվելու և հաշվառ-
ման են ենթարկվելու մարմարի խոշոր պաշարնե-
րը Փամբակի լեռնաշղթայում և Աղստեղի գետի մի-
ջին հոսանքի կիրճում:

Հիդրոգեոլոգիակաճ աշխատանքներ: Վերջին
տարիներում կատարված աշխատանքների շնոր-
հիվ մանրամասն կերպով ուսումնասիրվել են
Լենինականի, Արարատի, Սևանի ու Սիսիանի
գոգահովիտներում եղած արտեզյան ջրաբեր ա-
վազանները, որտեղ երևան են հանվել մի շարք
հզոր ջրաբեր, շատրվանոց հորիզոններ՝ խմելու
լավորակ ջրով:

Ներկայումս ավարտվում են ռեսպուբլիկայի
հիդրոգեոլոգիական քարտեզը 1:200 000 մասշ-
տաբով և «Հայկական ՍՍՌ ստորերկրյա ջրերը»
մենագրությունը կազմելու աշխատանքները, որը
լուրջ օնություն ցույց կտա ջրամատակարարման
հետագա խնդիրները լուծելու գործում:

Ամենամոտ տարիների հիդրոգեոլոգիայի հիմ-
նական խնդիրն է՝ պարզել ստորերկրյա ջրերի
աղբյուրները ռեսպուբլիկայի Գորիսի, Սիսիանի,
Ծղեգնաձորի, Նոյեմբերյանի, Իջևանի և այլ սա-
կավաշուր շրջաններում և միջոցառումներ մշա-

կել նրանց ջրամատակարարման համար ստոր-
երկրյա ջրերի օգտագործման միջոցով: Դրա հետ
միասին պետք է շարունակել ստորերկրյա ջրերի
հոսանքների տեսումնասիրման աշխատանքներն
այն շրջաններում, որոնք ծածկված են հրաբխա-
յին լավայի հոսանքներով (Արագածի լեռնա-
զանգվածները, Գեղամա, Վարդենիսի և Սյունի-
քի բարձրավանդակները), ստորերկրյա ջրերը
բարձր նշաթվերի վրա հավաքելու հնարավորու-
թյունները որոշելու և դրանք գյուղատնտեսության
կարիքների համար օգտագործելու նպատակով:

Յոթնամյա պլանում նախատեսվում են նաև
որոնումնային-հետախուզական աշխատանքներ,
որոնց նպատակն է մեծ խորություններից (700—
1200 մ) ստանալ բարձր ջերմաստիճանի ջրեր
(Արփա, Վեդի, Գառնի, Մարալիկ գետերի ավա-
զաններում, որտեղ որոշ տեղերում գետնի երեսն
են դուրս գալիս 30—65° C տաք հանքային ջրեր),
որոնք կարող են օգտագործվել կոմունալ-կեն-
ցաղային նպատակների համար:

Հայաստանի հանքային ջրերը, մանավանդ
«Ջերմուկը», լայն սպառում ունեն: Այդ կապակ-
ցությամբ մեծ չափով աճում է տարայի ապակու
պահանջը: Տարայի ապակի ստանալու համար
հումքի խոշոր բազաններից մեկը կարող է ծառա-
յել «Ջերմուկ» կուրորտից 30 կմ հեռավորության
վրա, Կեչուտ-Քաղարչայ սալային ճանապար-
հից ոչ հեռու գտնվող պերլիտների հանքավայրը:
Պերլիտի ապակու արտադրության ռացիոնալ
սեխնորագիայի մշակումը պետք է դառնա ռես-
պուբլիկայի հետազոտական կազմակերպություն-
ների անհետաձգելի խնդիրներից մեկը:

Նավթ և գազ: Նավթի և բնական դյուրավառ
գազի գծով որոնումնահետախուզական աշխա-
տանքներ կազմակերպելու համար առավել հեռա-
նկարային են հանդիսանում Ադիսի, Հոկտեմբեր-
յանի, Թալինի, Աշտարակի, Կոտայքի, Ախտայի,
Արտաշատի և Էջմիածնի շրջանները, որտեղ երե-
վան են հանվել նավթա-և գազաբերության տեսա-
կետից բարենպաստ լեռնային ապարների կա-
ռուցվածքներ ու կազմավորումներ: Այդ ապարնե-
րում հորատված մի քանի խորանցքեր ցույց
են տվել նավթաբերության անմիջական նշաններ՝
հեղուկ նավթի կաթիլների, ասֆալտների, գազա-
յին ավազների ու դյուրավառ գազի անսպառ
թույլ շիթերի ձևով: Նավթի և գազի համար երկ-

րախուղական աշխատանքների ամենամերձավոր խնդիրն է՝ երևան հանել, պարանշել և երկրաչափացնել բարեհաջող կազմութունները պրոֆիլային հորատման միջոցով և հետագայում այդպիսի կազմութունները նախապատրաստել հետախուղական խոր հորատման համար:

Նշված խնդիրների հաջող լուծումը պահանջում է վերանայել հետախուղման պրակտիկայում արմատացած առանձին դրույթները, լայնորեն կիրառել որոնումների ու հետախուղման նոր մեթոդները, գիտական խոր վերլուծման ենթարկել օգտակար հանածոների հանքավայրերի կազմավորման օրինաչափությունները և այլն: Առաջին, անհրաժեշտ է խիստ ավելացնել հետախուղման գեոֆիզիկական մեթոդների և կազմութայն անալիզի կիրառման գծով տարվող աշխատանքները, որոնք նպատակ ունեն երևան հանել կույր հանքամարմինները: Գրա անհրաժեշտությունն առանձնապես սուր զգացվում է Հայաստանի պայմաններում, որի տերիտորիայի մակերևութի վրա մանրամասն ուսումնասիրվել է և այսպիսի տերիտորիայի վրա սովորական վերերկրյա աշխատանքների միջոցով նոր հանքավայրեր կամ հանքամարմիններ երևան հանելու հնարավորությունը շահագանց սահմանափակ է դարձել:

Ներկայումս կույր հանքամարմինների երևան հանելը լուծվում է համեմատաբար խոր հորատանցքեր փորելու և թանկ արժեքող ստորերկրյա լեռնային փորվածքներ անցնելու միջոցով: Այդ տեսակետից ոչ մի էական բան չեն տվել նաև գիտա-հետազոտական կազմակերպությունների կատարած հատուկ թեմատիկ աշխատանքները:

Երկրորդ, անհրաժեշտ է վերանայել այժմ լայնորեն կիրառվող հետախուղական հորիզոնական փորվածքները վերևից-ներքև կատարելու հաջորդականությունը: Մեծ թվով հանքավայրերի (Դաստակերտ, Ղազմա, Բաբաջան, Աղվի, Մեծ-

ձոր, Այգեձոր և այլն) հետախուղման փորձը ցույց է տալիս, որ դրանց արդյունաբերական գնահատումը կարելի էր ստանալ զգալիորեն կարճ ժամկետներում և միջոցների շատ ավելի քիչ ծախսումներով, փորվածքները հակառակ հաջորդականությամբ կատարելու դեպքում, քանի որ ամենաստորին բովանցքների ու քվերշյազների տվյալները սովորաբար բավարար են լինում հանքավայրի մասշտաբները որոշելու համար և, ստորին հորիզոններում բացասական արդյունքներ ստանալու դեպքում, վերացնում են վերին շերտերում բովանցքների հարկաբաժիններ բացելու անհրաժեշտությունը:

Երրորդ, անհրաժեշտ է, որպեսզի արդյունաբերութայն համար հետաքրքրությունն ներկայացնող առանձին էլեմենտների կամ այլ օգտակար հանածոների գծով գիտա-հետազոտական կազմակերպությունները զբաղվեն մանրամասն պրոգնոզային քարտեզներ կազմելով, նշելով քարտեզների վրա հանքաբեր կազմութունները և որոշելով մոտավոր հանքավայրերն ու ամենազվախափոր հետախուղական փորվածքների ուղղությունները: Նմանապես ժամանակն է ընդհանուր երկրաբանական թեմատիկ հետազոտություններից անցնել կոնկրետ հանքային շրջանների երկրաբանության կոմպլեքսային ուսումնասիրմանը:

Վերջապես, ռեսպուբլիկայում պետք է զգալի շահով ընդլայնել միներալային հումքի տեխնոլոգիայի ու էկոնոմիկայի ուսումնասիրման աշխատանքները: Հետախուղական աշխատանքների սկզբում օգտակար հանածոների այդ կարևորագույն բնորոշ հատկությունների իմանալը կօգնի ճիշտ կողմնորշվել հանքավայրի գնահատականը տալու ժամանակ և կտա հանքավայրերի հետախուղման համար ծախսվող միջոցների հսկայական տնտեսում:

ՔԱՄՈՒ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. ՀԱԿՈՐՅԱՆ

Տեխնիկական գիտությունների քեկնածու

Հայաստանը հանքային վառելանյութի հանքավայրեր չունի, իսկ նրա ջրային ռեսուրսները շահագանց սահմանափակ են: Այդ հանգամանքը

պահանջում է գտնել էներգիայի նոր տեսակներ: Հայաստանում էներգիայի այդպիսի շօղազործվող տեսակներից մեկը քամու էներգիան է: